ՄԵՍՐՈՊ ԳԱԼՈՒՍՏԻ ԽՈՒՆՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 124-րդ կետով, **որոշում եմ.**

1.Թույլատրել Մեսրոպ Գալուստի Խույանին՝ շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 26-րդ փողոցի թիվ 35 հասցեի հողամասում 2021 թվականի հուլիսի 21-ի թիվ 117 շինարարության թույլտվությամբ տրված բնակելի տան, ամառային խոհանոցի,լողավազանի և պարիսպի կառուցման շինարարական աշխատանքները՝ համաձայն հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության ժամկետը երկարացնել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 17-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մեսրոպ Գալուստի Խույանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



2025 թ. սեպտեմբերի 17
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17» սեպտեմբերի 2025 թվականի N 1290-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի ԹԻՎ 622-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, **որոշում եմ.**

1. Համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողով ստեղծելու, նրա գործառույթները սահմանելու, առաջարկների ներկայացման հայտի և նախնական գնահատման աղյուսակի ձևաթղթերը սահմանելու մասին» թիվ 622-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշմամբ հաստատված N 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 17
գ. Զրվեժ

Հավելված

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2025 թվականի
սեպտեմբերի 17-ի թիվ 1290-Ա որոշման



« Հավելված N 4

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2025 թվականի
մայիսի 14-ի թիվ 622-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՋՐՎԵՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

N	Մասնակցային բյուջետավորման իրականացման փուլ	Միջոցառում (նկարագրել իրականացվելիք գործողությունները)	Պատասխանատու և կատարողներ	Աջակցող թիմա- կիցներ	Ժամկետներ
1.	Նախապատրաս- տական փուլ	Իրավական ակտերի նախագծերի կազմման մեկնարկի նախապատրաստական փուլ	Համայնքապետարանի աշխատակազմ		14.05.2025թ.- 15.05.2025թ.
2.	Իրազեկման փուլ	1.Շրջայցեր վարչական բնակավայրերում 2. Գովազդային նյութերի պատրաստում և հրապարակում 3.Հանդիպումներ ՀՈԱԿ-ների աշխատակիցների հետ	Համայնքապետարանի աշխատակազմ		16.05.2025թ.- 31.07.2025թ.
3.	Առաջարկների ներկայացման փուլ	Քաղաքացիների կողմից ներկայացվող հայտ առաջարկների ընդունում	Համայնքի 16 տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ, հասարակական միավորումներ և քաղաքացիական նախաձեռնություններ		01.08.2025թ.- 13.08.2025թ.
4.	Առաջարկների նախնական գնահատման փուլ	Ներկայացված առաջարկների համապատասխանության գնահատում՝ սահմանված չափանիշներին համապատասխան	Հանձնաժողով		14.08.2025թ.- 15.08.2025թ.
5.	Հանրային քննարկումների և լսումների փուլ	Սահմանված չափանիշներին համապատասխանող առաջարկների հրապարակում և հանրային քննարկում			18.08.2025թ.- 20.08.2025թ.
6.	Առաջարկների քվեարկության փուլ	Սահմանված չափանիշներին			21.08.2025թ.- 10.10.2025թ.,

		համապատասխանող և հանրային քննարկում անցած առաջարկների քվեարկության կազմակերպում			մինչև ժամը 18:00-ն
7.	Քվեարկության ամփոփման փուլ	Հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփում			13.10.2025թ. - 16.10.2025թ.
8.	Հայտերի կազմման փուլ	Քվեարկությամբ ընտրված ծրագրի/ ծրագրերի/ համար սուբվենցիոն հայտի կազմում, ներկայացում ՏԿԵՆ			17.10.2025թ.- 20.10.2025թ.
9.	Իրագործման փուլ	Քվեարկությամբ ընտրված ծրագրերի նախահաշվային փաստաթղթերի կազմում և շինարարական աշխատանքների ձեռքբերում գնումների մասին օրենսդրությանը համապատասխան			21.10.2025թ.- 14.11.2025թ.
10.	Իրականացման փուլ	Քվեարկությամբ ընտրված ծրագրերի իրագործում			17.11.2025թ.- 20.12.2025թ.
11.	Հաշվետվության փուլ	Իրագործված ծրագրերի ամփոփում, գործընթացի արդյունքների ներկայացում			21.12.2025թ.- 01.03.2026թ.

➔



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» սեպտեմբերի 2025 թվականի N 1291-Ա

ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-Ի N 1113-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 37-րդ հոդվածի 1-ին մասերով և հիմք ընդունելով քաղաքացի Անահիտ Սամվելի Շահնազարյանի խնդրանքը,
որոշում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել Զրվեժ համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 6-ի «Անահիտ Սամվելի Շահնազարյանին ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու մասին» N 1113-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անահիտ Սամվելի Շահնազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



2025 թ. սեպտեմբերի 18
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» սեպտեմբերի 2025 թվականի N 1292-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի և 244⁹-րդ հոդվածների պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Միքայել Արամի Հովսեփյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0344-0161 հողամասն օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ, **որոշում եմ.**

1. Միքայել Արամի Հովսեփյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Միքայել Արամի Հովսեփյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին:

3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Միքայել Արամի Հովսեփյանին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Միքայել Արամի Հովսեփյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 18
գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» սեպտեմբերի 2025 թվականի N 1293-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արմեն Արտակի Ղազարյանի՝ Զրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0331-0066 կադաստրային համարի 0,05002 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրելու բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատում իրականացնելու համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 08092025-07-0221, տրված 2025 թվականի սեպտեմբերի 8-ին):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 29-ի թիվ 100-Ն որոշումը, որոշում եմ.

1. Արմեն Արտակի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0331-0066 կադաստրային համարի 0,05002 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2. Առաջարկել Արմեն Արտակի Ղազարյանին՝ Զրվեժ համայնքի բյուջեի 900105221171 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 2 202 281 (երկու միլիոն երկու հարյուր երկու հազար երկու հարյուր ութսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Կառուցապատման հետագա գործառնություններն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀԸՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

4. Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

5. Համայնքապետարանի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝ սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

6. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արմեն Արտակի Ղազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025 թ. սեպտեմբերի 18

գ. Զրվեժ

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» սեպտեմբերի 2025 թվականի N 1294-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի և 244⁹-րդ հոդվածների պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Գոհարիկ Էդիկի Սուքիասյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0344-0151 հողամասն օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ, որոշում եմ.

1. Գոհարիկ Էդիկի Սուքիասյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Գոհարիկ Էդիկի Սուքիասյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Զրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին:

3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Գոհարիկ Էդիկի Սուքիասյանին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Գոհարիկ Էդիկի Սուքիասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:


5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 18
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» սեպտեմբերի 2025 թվականի N 1295-Ա

ՍԵՐԳԵՅ ԷԴՈՒԱՐԴԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԵՎ ԼԻԱՆԱ ՎԻԼԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ.**

1. Սերգեյ Էդուարդի Սահակյանին և Լիանա Վիլիկի Սարգսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 3-րդ զանգվածի 7-րդ թաղամասի թիվ 47,48 հասցեի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

4. Շինարարության թույլտվություն կտրամադրվի աշխատանքային նախագծում ինժեներական ենթակառուցվածքներին միանալու տեխնիկական պայմանների առկայության դեպքում:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սերգեյ Էդուարդի Սահակյանին և Լիանա Վիլիկի Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 18
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» սեպտեմբերի 2025 թվականի N 1296-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի և 244⁹-րդ հոդվածների պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Լիլիթ Կարենի Ասատրյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0344-0160 հողամասն օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ, **որոշում եմ**.

1. Լիլիթ Կարենի Ասատրյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Լիլիթ Կարենի Ասատրյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին:

3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Լիլիթ Կարենի Ասատրյանին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Լիլիթ Կարենի Ասատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 18
գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» սեպտեմբերի 2025 թվականի N 1297-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի և 244⁹-րդ հոդվածների պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Գալուստ Սևակի Գալստյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0344-0147 հողամասն օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ, **որոշում եմ.**

1. Գալուստ Սևակի Գալստյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Գալուստ Սևակի Գալստյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Զրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին:

3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Գալուստ Սևակի Գալստյանին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Գալուստ Սևակի Գալստյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:


5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 18
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» սեպտեմբերի 2025 թվականի N 1298-Ա

ԷԴԳԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄԱՐԶՊԱՆՅԱՆԻՆ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Էդգար Հարությունի Մարգարյանը հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, Հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2025 թվականի օգոստոսի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրված ելակետային տվյալների՝ հարկման օբյեկտ հանդիսացող, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի, Այգեգործական 21-րդ թաղամաս, թիվ 8 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 07-057-0206-0007) անշարժ գույքը հանդիսանում է քաղաքացի Էդգար Մարգարյանի սեփականությունը: Համայնքի բյուջե վճարման ենթակա անշարժ գույքի հարկը 2015-2024 թվականների համար կազմում է 14 760 (տասնչորս հազար յոթ հարյուր վաթսու) Հայաստանի Հանրապետության դրամ, որը սահմանված ժամկետում չի վճարվել: Քաղաքացի Էդգար Մարգարյանի՝ նշված ժամանակահատվածի համար անշարժ գույքի հարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 3 995 (երեք հազար ինը հարյուր իննսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի սեպտեմբերի 18-ին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Էդգար Մարգարյանը: Վերջինս վարչական վարույթի լուսմներին չի ներկայացել:

Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն Հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը սեփականության իրավունքով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող «Հարկային օրենսգրքի» 401-րդ հոդվածի համաձայն հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0,04 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հարկային օրենսգրքի 224-րդ և 225-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-60-րդ հոդվածներով, **որոշում եմ.**

1. Քաղաքացի Էդգար Հարությունի Մարգարյանից հօգուտ Ջրվեժ համայնքի բյուջեի գանձել 18 755 (տասնութ հազար յոթ հարյուր հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, որպես վճարման ենթակա անշարժ գույքի հարկ, որից՝ 3 995 (երեք հազար ինը հարյուր իննսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով՝ եռօրյա ժամկետում պատշաճ ձևով հանձնել Էդգար Հարությունի Մարգարյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:


4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 18
գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» սեպտեմբերի 2025 թվականի N 1299-Ա

ԶՈՒԼԻԵՏԱ ՊԵՐՃԻ ԱՂԱԲԱԲՅԱՆԻՆ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Զուլիետա Պերճի Աղաբաբյանը հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, Հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2025 թվականի օգոստոսի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Զրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրված ելակետային տվյալների՝ հարկման օբյեկտ հանդիսացող, Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի, Այգեգործական 11-րդ թաղամաս, թիվ 15 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 07-042-0200-0028) անշարժ գույքը հանդիսանում է քաղաքացի Զուլիետա Աղաբաբյանի սեփականությունը: Համայնքի բյուջե վճարման ենթակա անշարժ գույքի հարկը 2015-2024 թվականների համար կազմում է 30 732 (երեսուն հազար յոթ հարյուր երեսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, որը սահմանված ժամկետում չի վճարվել: Քաղաքացի Զուլիետա Աղաբաբյանի՝ նշված ժամանակահատվածի համար անշարժ գույքի հարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 9 700 (ինը հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի սեպտեմբերի 18-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Զուլիետա Աղաբաբյանը: Վերջինս վարչական վարույթի լսումներին չի ներկայացել:

Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Վարչական մարմինը, վարչական վարույթի ընթացքում ուսումնասիրելով գործի օբյեկտիվ լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը, այդ թվում՝ վարույթի մասնակցի օգտին առկա փաստերը, պարզել է, որ քաղաքացի Զուլիետա Աղաբաբյանի կողմից կատարվել է անշարժ գույքի պարտավորության գումարի մասնակի մարում՝ 14 417 (տասնչորս հազար չորս հարյուր տասնյոթ) Հայաստանի Հանրապետության դրամի չափով: Վերը շարադրյալի հաշվառմամբ վերջինիս պարտավորությունը ներկայումս կազմում է 26 015 (քսանվեց հազար տասնհինգ) դրամ, որպես վճարման ենթակա անշարժ գույքի հարկ, որից՝ 6 828 (վեց հազար ութ հարյուր քսանութ) դրամը՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն Հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը սեփականության իրավունքով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված է հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող «Հարկային օրենսգրքի» 401-րդ հոդվածի համաձայն հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հարկային օրենսգրքի 224-րդ և 225-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-60-րդ հոդվածներով, **որոշում եմ.**

1. Քաղաքացի Ջուլիետա Պերճի Աղաբաբյանից հոգուտ Ջրվեժ համայնքի բյուջեի գանձել 26 015 (քսանվեց հազար տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, որպես վճարման ենթակա անշարժ գույքի հարկ, որից՝ 6 828 (վեց հազար ութ հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով՝ եռօրյա ժամկետում պատշաճ ձևով հանձնել Ջուլիետա Պերճի Աղաբաբյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 18
գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» սեպտեմբերի 2025 թվականի N 1300-Ա

ՎՈԼՈՂՅԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Վոլոդյա Համբարձումի Հովհաննիսյանը հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, Հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2025 թվականի օգոստոսի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրված ելակետային տվյալների՝ հարկման օբյեկտ հանդիսացող, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի, 42-րդ փողոց, թիվ 81 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 07-057-0107-0004) անշարժ գույքը հանդիսանում է քաղաքացի Վոլոդյա Հովհաննիսյանի սեփականությունը: Համայնքի բյուջե վճարման ենթակա անշարժ գույքի հարկը 2023-2024 թվականների համար կազմում է 96 107 (իննսունվեց հազար մեկ հարյուր յոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, որը սահմանված ժամկետում չի վճարվել: Քաղաքացի Վոլոդյա Հովհաննիսյանի՝ նշված ժամանակահատվածի համար անշարժ գույքի հարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 32 841 (երեսուններկու հազար ութ հարյուր քառասունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի սեպտեմբերի 18-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Վոլոդյա Հովհաննիսյանը: Վերջինս վարչական վարույթի լսումներին չի ներկայացել:

Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն Հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը սեփականության իրավունքով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված է հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող «Հարկային օրենսգրքի» 401-րդ հոդվածի համաձայն հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հարկային օրենսգրքի 224-րդ և 225-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-60-րդ հոդվածներով, **որոշում եմ.**

1. Քաղաքացի Վոլոդյա Համբարձումի Հովհաննիսյանից հոգուտ Ջրվեժ համայնքի բյուջեի գանձել 128 948 (մեկ հարյուր քսանութ հազար ինը հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որպես վճարման ենթակա անշարժ գույքի հարկ, որից՝ 32 841 (երեսուներկու հազար ութ հարյուր քառասունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով՝ եռօրյա ժամկետում պատշաճ ձևով հանձնել Վոլոդյա Համբարձումի Հովհաննիսյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 18
գ. Ջրվեժ

